Հաշվետվություն

2024 թվականի ապրիլի 14-ից 16-ը Պորտուգալիայի Հանրապետություն կատարած գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը**
   Մարինե Սահակյան, Արտաքին կապերի վարչության պետ

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Լիսաբոն, ապրիլի 14-ից 16-ը

3. **Հրավիրող կողմը.**
   ՄԱԿ-ի Գլոբալ երկրատարածական տեղեկատվության կառավարման կոմիտե-Եվրոպա

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

Մասնակցություն ՄԱԿ-ի գլոբալ երկրատարածական տեղեկատվության կառավարման կոմիտե. Եվրոպա «Տվյալների ինտեգրում» և «Կայուն զարգացման նպատակներ» հարցերով հանդիպմանը:

Նոր համագործակցության հաստատում միջազգային կազմակերպությունների և տարբեր երկրների պաշտոնական ներկայացուցիչների հետ:

Մասնագիտական բնագավառում միջազգային փորձի փոխանակում:

5. **Քննարկված թեմաները.**

Հանդիպման երկու օրերի ընթացքում ներկայացվեցին հետևյալ հիմնական թեմաները.

- ✓ Տվյալների ինտեգրում,
- ✓ Կայուն զարգացման նպատակներ,
- ✓ Գործողությունների կարգավիճակը ըստ 2022-2025 թթ. աշխատանքային պլանի,
- ✓ Վիճակագրական և երկրատարածական տեղեկատվության ինտեգրման ՄԱԿ-ի փորձագիտական խմբի աշխատանքները, արդյունքները և մարտահրավերները,
- ✓ UN EG-ISGI Ինտեգրված երկրատարածական տեղեկատվության շրջանակի գործողությունները, արդյունքները և մարտահրավերները,
- ✓ UN-GGIM ակադեմիական ցանցի գործողությունները,
- ✓ UN-GGIM Կլիմայի կայունության աշխատանքային խմբի մանդատի գործառույթները, արդյունքները և մարտահրավերները,

- ✓ Միավորված ազգերի կազմակերպության ինտեգրված աշխարհատարածական տեղեկատվական շրջանակ (UN-IGIF),
- ✓ Առանձին խմբերով ոլորտային քննարկումներ; տվյալների ինտեգրման աշխատանքային խումբ, կայուն զարգացման նպատակների աշխատանքային խումբ:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Ապրիլի 15-16-ը տեղի ունեցավ ՄԱԿ-ի գլոբալ երկրատարածական տեղեկատվության կառավարման կոմիտե. Եվրոպա «Տվյալների ինտեգրում» և «Կայուն զարգացման նպատակներ» աշխատանքային խմբերի հանդիպումը: Հանդիպմանը մասնակցում էին ինչպես վիճակագրական, այնպես էլ կադաստրի, քարտեզագրության լիազոր մարմինների ներկայացուցիչները: Հանդիպման ընթացքում ելույթներով հանդես եկան աշխատանքային խմբերի անդամ երկրների ներկայացուցիչները, ներկայացրին իրենց երկրների փորձը վիճակագրական և երկրատարածական տվյալների ինտեգրման, փոխանակման, արտապատկերման ոլորտներում: Ներկայացվեցին UN-GGIM. Europe Ինտեգրված երկրատարածական տեղեկատվական շրջանակի գործունեության ընթացքը, արդյունքներն ու մարտահրավերները, վիճակագրական և երկրատարածական տեղեկատվության ինտեգրման ՄԱԿ-ի փորձագիտական խմբի աշխատանքները, արդյունքներն ու հեռանկարները:

Հանդիպման ժամանակ կազմակերպվել են առանձին խմբերով ոլորտային քննարկումներ, մասնակցել եմ տվյալների ինտեգրման աշխատանքային խմբի քննարկմանը: Ներկայացրել եմ ՀՀ ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի, ստանդարտների մշակման կարևորությունը տվյալների ինտեգրման մեջ: Առանձնակի շեշտադրվել է վիճակագրական և երկրատարածական տվյալների լիազոր մարմինների համագործակցությունը, փորձի փոխանակումը և մեկ համընդհանուր գաղափարի շուրջ աշխատելու կարևորությունը:

Անդրադարձ կատարվեց աշխարհատարածական տվյալների վերլուծության ներդրմանը և վիճակագրական տվյալների հետ դրանց ինտեգրմանը գլոբալ, եվրոպական և ազգային տեսանկյունից՝ հիմնված կայուն զարգացման ցուցանիշների վերլուծության վրա:

Աշխատանքային երկու օրերի ընթացքում առանձին հանդիպումներ և քննարկումներ եմ ունեցել կազմակերպիչների և լիազոր մարմինների ներկայացուցիչների հետ: Քննարկումներ եմ ունեցել նաև Նիդերլանդների և Բելգիայի Թագավորությունների կադաստրների ներկայացուցիչների հետ՝ տարածական տվյալների ինտեգրման վերաբերյալ:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Հանդիպման ավարտին ամփոփվեցին տվյալների ինտեգրման և կայուն զարգացման նպատակների աշխատանքային խմբերի առաջարկությունները, բարձրացված խնդիրները, և հնարավոր լուծումներ առաջարկվեցին:

Հստակեցվեցին հետագա անելիքները և ապագայի տեսլականը՝ կարևորվեց հատկապես ազգային վիճակագրական և երկրատարածական գործակալությունների միջև միջազգային համագործակցության խորացման գործընթացը:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Հանդիպման ավարտին կազմակերպիչները կարևորեցին Հայաստանի մասնակցությունը միջոցառմանը, պայմանավորվածություն ձեռք բերվեց ակտիվ մասնակցել առցանց կազմակերպվող միջոցառումներին՝ փորձի փոխանակման, մասնագիտական նոր գիտելիքների և հմտությունների ձեռքբերման տեսանկյունից:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

Մարինե Սահակյան 19.04.2024 թ.